

“ԱՅՏՆԱՆ ԱՐԻՈՒՍՏՅԱՑԱՏԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ”

Հիմնարկութեանն Յանձնախումբը կը խնդրէ մեզմէ ծանուցանել Յարգոյ Հայ Հասարակութեան եւ Հարգելի Խմբագրութեանց իւր խորին շնորհակալութիւնը ձեռնակարկութեան ամէն կողմանէ ցոյց տրուած համակրութեան եւ անակցելու խոստմանց, որով առաւել եւս քաջարեալած՝ Կաշխատար այս օգտաշատ նպատակին հասնելու ամէն միջոց գործադրել: Ուղղուած բազմութիւն հարցումներն առ այժմ լիովին գոհացրին անկարելի ըլլալով՝ միայն այսչափ կը յայտնէ, որ Յանձնախումբն զիտաւորութիւն չունի այժմէն իսկ մեծ գրամագրութիւն կազմելու եւ սաոր շահն յապազային գործադրելու. այլ իբր 6000 Ֆրանք վերապահեալ զրամագրութիւն մը միայն առ այժմ ունենալ իրենս պահեստ (réserve), իսկ ասկէ զատ գումարուածն ըստ տրամագրութեանն Վարչական Ժողովոյն՝ Հիմնարկութեան նպատակին գործադրել, եւ հետզհետէ գանձուած նպաստները նոյն համեմատութեամբ պահեստի եւ գործադրութեան յատկացրել, այնպէս որ գործը կարելի ըլլայ ամենամօտ ժամանակ իրականացած տեսնել, եւ միեւնոյն ժամանակ նաեւ գործին ազգային ապահովընել: Կցոյց տրուած համակրութիւնն այնչափ է որ Յանձնախումբն ի վիճակի է յայտնել թէ այս տարի իսկ կարելի պիտի ըլլայ գործադրութեան սկսիլ: Եւ երբ մանրամասն պիտի ծանօթանայ Հասարակութիւնն՝ հրատարակելէ կանոնադրութենէն:

Այլ խնդրուի Հայ Խմբագրութիւններէն՝ որ իրենց աջակցութիւնն օր յօր անստուգանեն, եւ այն համարներն, որոնց մէջ այս մասին գրուած է, Հանդիմանալի Խմբագրութեան իրեն իրեն զօրօշն թղթատարութեան Յանձնախումբն յանձնելու համար, որ ետքէն պահուի Հիմնարկութեան գիւնդին մէջ: Հայրենիք թ. 1124 եւ Ղեւնդէի Բարբէիքի թ. 2959, ինչպէս եւ այլ այս մասին հրատարակեալքն կը խնդրուին:

Անուանք մասնակցողաց Ձեռագրաց Ցուցակի հրատարակութեան:

4. Պր. Յ. Անդրէասեան
5. Պր. Ս. Եւալդըճեան
6. Պր. Ս. Եղիազարեան
7. Իշխան Գուրգոն Լուսինեան

8. Սկովտացի Բենեդիկտեանք ի Վիեննա
9. Փրոֆ. Գրիորիճ Միւլլեր
10. Լազարեան ձեմարան
11. Պր. Գր. Խալաթեան
12. Փրոֆ. Տր. Պ. Գէթթեր

ԽՄԲ. “ՀԱՆԳԻՍԻ”



ՔԱՂԱՔԱՔԱՆ ՏԵՍՈՒՐԻՆ

Վիեննա, 25 Ապրիլ, 1895:

Անտրիա այժմ՝ անսակնկալ տալանորութեան ներքեւ կը գտնուի: Ապրիլ 4ին վերջացած քրքին խորհրդարանի պատգամաւորաց մասնական ընտրութիւնն անյուսակի ելք մ'ունեցաւ, որ Վիեննայի Ժողովրդեան մեծամասնութեան խորհելու եղանակին ու համազմանցը հաւատարիմ թարգման կը հանդիսանայ: Այս ընտրութեանց ժամանակ “Բրիտտոնեայ-Լնկերական”, ու “Գերմանական ազգային”, միացեալ քրիստոնեայ Ժողովրդական կուսակցութիւնը առաջնորդութեամբ արքունական ու դատարանական փաստաբան Տր. Լուէկէրի եւ Վիեննայի համալսարանի մատենադարանապետ Տր. Կէսմանի մարտ կը մղէր ազատամիտ կուսակցութեան դէմ: Մեծ էր վերջնոյս յուսանալով, երբ Մարտ 28ին “Հրէից կղզի”, ըստած Լէոքոտշդատը (Վիեննայի Բ. թաղ) Գ. ընտրող շրջանակի մէջ 1 քրիստոնեայ թէկնածու՝ Ապրիլ 1.—3. Բ. շրջանակին մէջ (ընտրողներն էին պետական պաշտօնեաներ, խոնարհագոյն կղերն եւ ուսուցիչներ) 25՝ իսկ Ա. շրջանակին մէջ (հարուստներու դասակարգը) չորս ընտրելիներու մէջէն 1, ընդ աճէնը 27 քրիստոնեայ թէկնածու յաղթող եւան, շահելով 19 նոր շրջանակ: Այսպէսով 34 տարիէ ի վեր քրքին խորհրդանոցին մէջ տիրող ազատամիտ կուսակցութիւնն՝ 61 ծայրի փոքրամասնութիւն եղաւ եւ անոր յաջորդեց վերոյիշեալ կուսակցութիւնը 46 ծայրի գործութեամբ: Ընտրութեանց այս ելքը յինքեան տարօրինակ երեւոյթ մը չէ: Անտրիական ազատամիտ կողմակցութիւնն ի մասնաւորի